Banaktsutiwnner Azgayin
Patuirakutean ew Hayastani
Hanrapetutean mijew

S. Vratsean

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2017-07-13 11:15 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2017-07-13 11:59 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Գրեց՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

Հրատարակութիւն «Հայրենիք»ի
1920, Պոսթրն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2017-07-13 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ
ԵՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹ. ՄԻԱՑԵԼ

Կորուած լինելով արտասահմանի կեանքից եւ չտանալով դաղութային մամուլը՝ մենք՝ Հայաստանի քաղաքացիներս՝ շատ քիչ տեղեկութիւններ ունէինք արտասահմանի հայ դաղութների կեանքում մղուող այն բուռն պայքարի մասին, որ ծայր էր տուել, մանաւանդ, Մայիս 28-ի ակտից յետոյ: Սակայն հետզհետէ ստացուած թերթերից, եկած ճամբորդներից ու նամակներից, այլ եւ Պարիզի մեր Պատուիրակութեան անդամներից, ինչպէս նաեւ Հ. Յ. Դաշն. 9-րդ Ընդհ. Ժողովին եկած պատգամաւորների բերած տեղեկութիւններից յայտնի եղաւ, թէ այդ ակտը ահագին աղմուկ է հանել արտասահմանում եւ հայ հասարակութիւնը բաժանել է երկու՝ իրար դէմ պայքարող բանակների: Պարզուեց նաեւ, թէ ի՜նչքան ոյժ ու եռանդ է վատնուել այդ անիմաստ ու գռեհիկ միջոցներով տարուող պայքարի համար:

Պէտք է ասել, որ մեզ՝ Հայաստանցիներիս համար անհասկանալի էր այդ տա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բօրինակ վէճի իմաստը։ Ի՞նչ սարսափելի բան կար Մայիս 28–ի ակտի մէջ, որ այդ պիսի փոթորիկ է առաջ բերել նրա շուրջը։ Զէ՞ որ, օրինակ, Նոյեմբեր 20–ին էլ նման ակտ էր յայտարարուել Գօղոս Նուպարի կողմից, եւ, սակայն, Հայաստանում ոչ ոք չբողոքեց ու չվրդովուեց դըրանից, անշուշտ, մէջտեղը անհասկացողութիւն կար, եւ այդ անհասկացողութիւնն արդիւնք էր այն սխալ ըմբռնման, որին ենթարկուել էր Մայիս 28–ի ակտը արտասահմանի հայ հասարակութեան մէջ։

Մայիսի 28–ի ակտը, այսինքն Միացեալ եւ Անկախ Հայաստանի յայտարարումը մեզ համար ո՛չ մի յետին միտք չէր պարունակում, եւ մեզանից ոչ ոք մտածել անգամ չէր կարող, թէ այդ ակտը Հայաստանից դուրս, այդպիսի անհեթեթ գնահատութեան կ՚արժանանայ։ Ո՛չ ոք չէր կարող խորհել, որ կը գտնուեն մարդիկ, որոնք այդ գերազանցապէս պատմական ակտը անձնական կամ խմբական արժանապատուութեան հարց կը դարձընեն։

Մայիսի 28ին, Հայաստանի Հանրապետութեան տարեդարձի օրը, կատարուած հանդէսն ու միութեան եւ անկախութեան յայտարարութիւնը ամէնից առաջ հետեւանք էր Հայաստանի սահմաններում ապ–

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

րող տաճկահայութեան պահանջի։ Նը-
բանք էին, որ վերջին համագումարում
պահանջ էին դրել, որ, ըստ կարելւոյն
չուտ, կատարուի անկախութեան պաշտո-
նական հռչակումը։ Նրանց ներկայացու-
ցիչներն էին, որ մէկից աւելի անգամներ
դիմել են կառավարութեան եւ Հայաստա-
նի Խորհրդարանին եւ առաջարկել այդ
ակտը կատարել։ Եւ, վերջապէս, բոլոր
իրադարձութիւններն այնպէս էին, որ
այդ ակտը եղել է Հայաստանի ահման-
ներում ապրող նախկին տաճկահայերի եւ
կառավարութեան փոխադարձ համաձայ-
նութեամբ։

Ի՞նչ նպատակ է ունեցել Հայաստանի
Կառավարութիւնը՝ Մայիսի 28-ի ակտը
դլուխ բերելով — բռնութիւն դնել տաճ-
կահայերի կամքի վրա՞յ, սեփականացնել
Պարիզի Ազգային Համագումարի իրա-
ւունքնե՞րը, չեզոքացնել Պօղոս Նուպարի
Պատուիրակութի՞ւնը, առաջ տանել ինչ
որ նեղ կուսակցական շահե՞ր։— Բնա՛ւ
եւ ամենեւին ոչ։ Ծայրայեղ աստիճանի
անբարեխղճութիւն կը լինի այս տեսակ
մեղադրանք շպրտել Մայիսի 28-ի ակտի
հեղինակների երեսին։ Նրանք կարիք չու-
նէին այդպիսի թաքուն նպատակներ հե-
տապնդելու։ Նրանք այնքան տղայամիտ
չեն, որ չհասկանան, թէ ի՞նչ վտանգա-
ւոր հետեւանքեր կ՚ունենային այդօրի-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:17 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նակ միտումների արտայայտությունը։ Եւ, վերջապէս, ի՞նչ կարիք ունէին նը-
րանք այդպիսի քայլերի...։

Մայիսի 28-ի ակտը անելով՝ Հայաստանի Կառավարությունը մէկ մտահոգությունն ունէր — արագացնել հայ ժողովրդի երկու հատուածների միությունը եւ ի լուր աշխարհի յայտարարել հայ ժողովրդի անյողդողդ կամքը՝ անկախ պետական կեանքով ապրելու։ Հայաստանի Կառավարությունը շատ լաւ հասկանում էր, որ միութեան իրականացումը միայն յայտարարութեամբ չէր լինի, անհրաժեշտ էր գործնական քայլեր առնել, եւ դրա համար նա տպաւորում էր, որ արեւմտահայութեան կողմից ընդառաջ կ'երթան այդ յայտարարութեան, եւ քիչ ժամանակ յետոյ կը կազմուի միացեալ կառավարութիւն եւ միացեալ խորհրդարան։ Այդ նը-պատակով էլ նա արաւ հարկաւոր քայլերը՝ վստահ, որ թէ Պօլսում եւ թէ, մանաւանդ Պարիզում Մայիսի 28-ի ակտը հիշդ կը հասկացուի եւ ջերմ վերաբերումի կը հանդիպի։

Սակայն, դժբախտաբար, այդպէս չը-պատահեց։ Պարիզի Ազգային Պատուիրակութիւնն իրեն վիրաւորուած է զգացել Մայիսի 28ի ակտից եւ նոյնիսկ պատրաստուել է հրապարակային յայտարարութեամբ բողոքել նրա դէմ։ Եւ միայն չը-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:18 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արդ՝ որո՞նք են այն հարցերը, որոնք քննութեան նիւթ են դարձել Պարիզում և ի՞նչ եզրակացութիւններ են հանուել։

Բանակցութիւնները Պարիզում Պօղոս Նուպարի եւ Ահարոնեանի միջեւ տեւել են բաւական երկար, բանակցութեան առարկայ է եղել Ամբողջական Հայաստանի Կառավարութեան, Պարլամենտի եւ Պատուիրակութեան կազմութեան հարցը։ Ստացուել է հետեւեալ արդիւնքը.

Պօղոս Նուպարը պահանջել է կազմել.—

1) Միացեալ Պարլամենտ. կէսը՝ ռուսահայ, կէսը՝ տաճկահայ։

2) Միացեալ ժամանակաւոր կառավարութիւն, կէսը՝ տաճկահայ, կէսը՝ ռուսահայ։

3). Կառավարութեան կազմի տաճկահայ անդամները նշանակւում են Պօղոս Նուպարի Պատուիրակութեան կողմից. ռուսահայ անդամները՝ Հայաստանի ներկայ կառավարութիւնից։

4) Պորտֆէյլների բաժանումը կատարել փոխադարձ համաձայնութեամբ, բայց նախարարապետը պէտք է լինի Պօղոս Նուպարը՝ մնալով նաեւ Միացեալ Պատուիրակութեան նախագահ։

5). Արտաքին գործոց նախարարը պէտք է լինի ոչ-Դաշնակցական։

6). Զինուորական նախարարը պէտք է լինի ոչ-Դաշնակցական եւ նշանակուի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:18 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

երկու կողմերի ընդհանուր համաձայնութեամբ:

7). Քանի որ նախարարապետը պիտի ապրի Պարիզում, նրան Երեւանում պէտք է նշանակել փոխանորդ:

8) Ժամանակաւոր կառավարութիւնը կազմուելուց յետոյ, ներկայ Պարլամենտին պիտի տրուի անորոշ ժամանակով դադար, մինչեւ որ գումարուի միացեալ Պարլամենտը:

9). Տաճկահայերի պարլամենտական ընտրութեան ձեւը պէտք է մշակուի փոխադարձ համաձայնութեամբ եւ իսկոյն պէտք է անցնել ընտրութիւններին:

10). Միացեալ Պատուիրակութիւնը պէտք է կազմուի Պարիզում, փոխադարձ համաձայնութեամբ, չորս-չորս կամ երեք-երեք ամէն կողմից: Տաճկահայ անդամներին կը նշանակէ Պօղոս Նուպարը, իսկ միւս կողմինը՝ կառավարութիւնը:

11. Պօղոս Նուպարի նշանակած անդամները անփոփոխելի են, եւ նոյնիսկ միացեալ ժամանակաւոր կառավարութիւնն իրաւունք չպիտի ունենայ հրաժարեցնել նրանց մինչեւ հայկական հարցի լուծումը:

12). Նոր Պատուիրակութեան նախագահ լինելու է Պօղոս Նուպարը եւ ամբողջապէս պատասխանատու պիտի լինի մի-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:18 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ացեալ կառավարութեան առջեւ. շատ խնդիրներ նա պիտի լուծի ըստ իր հայեցողութեան, առանց կառավարութեան կամքը առնելու:

Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնն ընդունել է, որ

1). Կառավարութիւնն ու Պարլամենտ կազմուին կէս առ կէս՝ տաճկահայերից եւ ռուսահայերից:

2). Նախարարապետը պէտք է ապրի Հայաստանում եւ ոչ Պարիզում, հետեւաբար Պօղոս Նուպար չի կարող այդ պաշտօնն ստանձնել:

3). Զինուորական նախարարը պէտք է լինի չէզոք անձնաւորութիւն, ինչպէս մինչեւ այսօր է եղել, արտաքին գործոցը՝ ներկայ կառավարութիւնից կը նշանակուի:

4). Երկու Պատուիրակութիւնները կը ձուլուեն Պօղոս Նուպարի գլխաւորութեամբ, սակայն Միացեալ Պատուիրակութիւնը պէտք է գործէ կառավարութեան հրահանգներով եւ պատասխանատու է կառավարութեան առջեւ:

5). Նոր Պատուիրակութեան տաճկահայ անդամները կարող են նշանակուել Պօղոս Նուպարի կողմից, բայց մի անդամ որ Պատուիրակութիւնը կազմուեց, այլ եւս նա ենթակայ է կառավարութեան:

6). Ցանկալի է նոր Պատուիրակութիւ-

Generated on 2017-07-13 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նը կազմել երեք հոգուց — նախագահ՝ Պօղոս Նուպար, անդամներ՝ մէկ Դաշնակցական եւ մէկ ոչ-Դաշնակցական։

Ուշադիր ընթերցողը երկու կողմի այս առաջարկութիւններն իրար հետ համեմատելուց եւ մանրամասն քննելուց յետոյ՝ չի կարող չնկատել, որ երկու հիմնական աշխարհահայեացք իրար են բաղխել այս տեղ։ Մի կողմից ցանկութիւն Հայաստանը կառավարելու հին ձեւով, միւս կողմից ձգտում՝ Հայաստանի քաղաքական ճակատագիրը նախ եւ առաջ տեսնել Հայաստանի մէջ, Ժողովրդի ծոցում։ Մի կողմից խօսում է հին՝ աղա-ամիրայական մտայնութիւնը, միւս կողմից՝ Ժողովրդական—դէմօկրատիկ ոգին։ Այս երկու ըմբռնումներն են, որ յետագային աւելի ցայտուն կերպով են երեւան գալիս։

Մինչդեռ Պարիզում տեղի են ունենում բանակցութիւններ, որոնց մասին Հայաստանում շատ ուշ միայն իմացուեց, թէ Ահարոնեանի, թէ Պօղոս Նուպարի կողմից հեռագրական դիմում է լինում Հայաստանի Կառավարութեան, որով առաջարկւում է չձեռնարկել Կառավարութեան եւ Խորհրդարանի վերակազմութեան Մայիս 28-ի ակտի համաձայն եւ սպասել Պարիզից ուղարկուելիք պատգամաւորներին, որոնք բերելու են այդ առ-

Generated on 2017-07-13 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

թիւ նոր առաջարկութիւններ։ Հայաստանի կառավարութիւնը բնականաբար, միայն ուրախանալ կարող էր այդ դիմումին համար, ուստի եւ շտապում է դրական պատասխան տալ։ Այնուհետեւ բաւական երկար ժամանակ կառավարութիւնը մնում է չլրացուած տաճկահայ անդամներով. նրանց յատկացուած տեղերը մնում են բաց։

Պէտք է այստեղ ասել, որ Մայիսի 28ի ակտը կատարուեց կառավարութեան բոլոր անդամների սկզբունքային համաձայնութեամբ։ Կառավարութիւնը, որ կազմուած էր Դաշնակցական եւ «Ժողովրդական» նախարարներից, միաձայնութեամբ կազմակերպեց Մայիսի 28ի հանդէսը, որին նախագահեց Ժողովրդական Կուսակցութեան ներկայացուցիչ հանրային կրթութեան եւ արուեստի նախարար Դ. Մելիք-Ղարագէօզեանը։ Միութեան եւ Անկախութեան յայտարարութեան թուղթը ստորագրել են բոլոր նախարարներն՝ առանց կուսակցական խտրութեան։ Ակտին միայն Սոց.-Յեղ. եւ Սոց.-Դէմ. ֆրակցիաներն էին հակառակ, բայց նրանց ազդեցութիւնը Հայաստանում այնքան աննշան է, որ հազիւ թէ կարելի լինի, որեւէ կարեւորութիւն տալ նրանց կարծիքին։

Մայիս 28-ից յետոյ միայն, իրենց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ներքին պառակտումների հետեւանքով, Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը, յանկարծ, դէմ արտայայտուեց կատարուած ակտին: Թէ ինչ էր դարձել նրանց ներսը, այդ, ի հարկէ, մեզ յայտնի չէ, բայց յայտնի է, որ քաղաքական գործիչներին անվայել ձեւով նրանք դուրս եկան մի ակտի դէմ, որի հեղինակներից մի քանիսն էլ իրենց ներկայացուցիչներն էին եւ որի կարեւորութիւնն իրենք էլ էին հասկանում ու պնդում:

Ժողովրդական Կուսակցութեան հակառակութիւնն աւելի եւս ուժեղացաւ, երբ Պարիզից՝ Պրն. Մ. Պապաջանեանից ստացուեցին հրահանգներ, որ Ժողովրդական Կուսակցութիւնը չարժուի համաձայն Պօղոս Նուպարի ցուցմունքներին: Զէ կարելի նկատողութեան չառնել Պրն. Մ. Պապաջանեանի տգեղ ընթացքը, որովհետեւ նա, իբրեւ պատուիրակ Հայաստանի Հանրապետութեան, պարտաւոր էր կամ ղեկավարուել այդ Պատուիրակութեան ունեցած հրահանգներով, կամ հրաժարուել: Նա, սակայն, մնաց Պատուիրակութեան կազմի մէջ եւ շարունակեց գործել նրա դէմ՝ այդպիսով արջի ծառայութիւն մատուցանելով Հայաստանի դատին: Անշուշտ, Պրն. Պապաջանեանը ժամանակին կը պարզէ հանրութեան առջեւ իր ընթացքի դրդիչները, բայց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այն, ինչ որ այսօր է յայտնի այստեղ, շատ վատ վկայական է նրա քաղաքական կարիերի համար։

Հայ Ժողովրդական Կուսակցութեան վարմունքն սկզբում հասկանալի չէր մեզ համար, սակայն հետզհետէ եկան արտասահմանից թերթեր ու տեղեկութիւններ, եւ ամէն բան պարզուեց. դուրս է գալիս, որ արտասահմանում Մայիսի 28-ից յետոյ հսկայական փոթորիկ է առաջ եկել հայ գաղութների կեանքում, կատաղի պայքար է սկսուել, եւ Պարիզը, դժբախտաբար, փոխանակ մեղմացնելու ու հանդըստացնելու կրքերը, իր անխորհուրդ գործելակերպով աւելի է հրահրել հըրդեհը։ Վէճն ու կռիւը հայկական շրջաններից անցել է օտարներին, եւ ահա ամէն կողմից սկսել են տեղալ դժգոհութիւններ ու յորդորներ վերջ տալու պառակտումին։ Հայաստանում, որ այդ աղմուկի թոյլ արձագանգներն էին միայն հասնում, միանգամայն հակառակ տրամադրութիւն էր իշխում։ Եւ այդ էր պատճառը, որ Պարիզից մեկնելիք պատուիրակութեան առանձին կարեւորութիւն էր տրւում այստեղ։

Սեպտեմբերի 28-ին Երեւանում բացուեց Հ. Յ. Դաշնակցութեան 9-րդ ընդհանուր ժողովը, իսկ Հոկտեմբերին Երեւան հասան Պօղոս Նուպարի երկու առաքեալ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ները՝ Պ. Պ. Վահան Թէքէեան եւ Ն. Տէր Ստեփանեան։ Պօղոս Նուպարի յանձնարարութեամբ առաքելութեան կազմի մէջ է առնւում եւ Ժողովրդական Կուսակցութեան հիմնադիրներից ու ղեկավարներից մէկը՝ Պ. Սամսոն Ցարուբիւնեանը։

Պէտք է ասել, որ այս հանգամանքը շատերի վրայ վատ ազդեցութիւն ունեցաւ. առաքելութիւնն եկել էր «յանուն արեւմտահայութեան» բանակցութիւններ սկսելու, ի՞նչ կապ ունէր այդ գործի հետ Ս. Ցարուբիւնեանը, մէկը, որ այնպէս կրքոտ ու չմտածուած պայքար էր մղում ներկայ կառավարութեան դէմ։ Հէնց առաքելութեան գալուց մի քանի օր առաջ Աղէքսանդրապօլում մի քանի խմբեր բաց էին թողել մի թռուցիկ, որով պահանջում էին լուծել ներկայ կառավարութիւնն ու պարլամենտը։ Այդ թռուցիկի տակ ստորագրել էր եւ Ս. Ցարուբիւնեանի կուսակցութիւնը։ Ժողովրդական Կուսակցութեան վերջին համագումարը հանել էր մի բանաձեւ կառավարութեան դէմ եւ այդ բանաձեւն ստորագրել էր Ս. Ցարուբիւնեանը։ Նա էր, վերջապէս, որ Թիֆլիսի ու Բագուի հայ առեւտրականներին դրդում էր Հայաստանի Կառավարութեան դէմ եւ ամէն կերպ աշխատում վարկաբեկել նրան։ Այսպիսի մէկին նշանակել բանակցելու «յանուն արեւմտա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հայութեան», առնուազն, անտակտութիւն էր, որ, ի հարկէ, չէր կարող վատ նշան չհամարուել եւ կասկածի տրամադրութիւն առաջ չբերել շատերի մէջ։

Այսպէս թէ այնպէս, առաքելութիւնը հասաւ Երեւան եւ ներկայանալով նախարարապետ Ա. Խատիսեանին՝ առաջարկեց սկսել բանակցութիւնները՝ Ամբողջական Հայաստանի Պարլամենտի, Կառավարութեան եւ Պատուիրակութեան կազմութեան մասին։ Դիմումը նախարարապետի կողմից յանձնուեց Հ. Յ. Դաշնակցութեան խորհրդարանական ֆրակցիային, իսկ այս վերջինս, քանի որ զումարուած էր իրենից բարձր իրաւասութիւն ունեցող Ընդհանուր Ժողովը, յանձնեց նրան։ Ընդհանուր Ժողովն իր Հոկտեմբեր 24-ի երկու նիստերում քննեց առաջարկները եւ որոշեց սկզբունքով սկսել բանակցութիւնները եւ այդ նպատակով ընտրել մի յանձնաժողով երեք հոգուց բաղկացած, որին եւ տուեց մի շարք հրահանգներ, որոնց ամփոփումը հետեւեալն է.

1). Կատարել լրացուցիչ պարլամենտական ընտրութիւններ թէ՛ Հայաստանի ներսը եւ թէ արտասահմանի հայ գաղութներում, այն հաշուով, որ առնուազն պատգամաւորների կէսը լինի տաճկահայ։

2). Կառավարութեան անդամների կէս-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ոից ոչ պակասը պէտք է նշանակուին ա-
բեւմտահայերից։

3). Պարիզի երկու պատուիրակութիւն-
ները ձուլել մէկ Պատուիրակութեան մէջ,
որը գործելու է կառավարութեան հրա-
հանգներով եւ որին նախագահ կարող է
լինել Պօղոս Նուպարը։

Այս կէտերը պատասխան չեն այն ա-
ռաջարկութիւնների, որ բերել էր Պօղոս
Նուպարի պատուիրակութիւնը, եւ որ կը
ներկայացնենք քիչ յետոյ։ Ընթերցողը կը
նկատէ, որ էական, սկզբունքային տար-
բերութիւններ այս կէտերի եւ Պարիզից
բերուած առաջարկութիւնների բղխում
են այն տարբեր ըմբռնումներից ու տեսա-
կէտներից, որ ունէին Պօղոս Նուպարի եւ
Հայաստանի Հանրապետութեան ներկա-
յացուցիչները։ Պարիզից եկած առաքե-
լութեան հետ բանակցելու համար ընտըր-
ուեցին Շաւարշ Միսաքեան, Մարտ. Յա-
րութիւնեան եւ Ս. Վրացեան։

Նախ քան բանակցութիւնների անցնի-
լը՝ առաջ բերենք Պօղոս Նուպարի կող-
մից Պրն. Վահան Թէքէեանի ներկայա-
ցրած ծրագիրն ամբողջութեամբ։

Generated on 2017-07-13 11:25 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՌԺԱՄԵԱՅ ԿԱԶՄԻ ՄԱՅԻՆ

Անդրկովկասեան Հայաստանի մէջ ներկայիս իրականապէս (de facto) գոյութիւն ունեցող Հայ Հանրապետական Կառավարութեան եւ նախկին Օսմանեան Հայաստանի հայերը ներկայացնող Ազգային Պատուիրակութեան միջեւ կը կընքուի համաձայնութիւն մը հետեւեալ հիմունքներուն վրայ:

Ա. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

1. Կը կազմուի Առժամեայ Կառավարութիւն մը, որու Նախարարական Խորհուրդը կը բաղկանայ 9–13 անդամէ:

2. Նախարարական Խորհուրդին մէջ կը մտնեն 4–6 արեւելահայ եւ 4–6 արեւմըտահայ նախարարներ, իւրաքանչիւր կողմին համար հաւասար թուով. Պատերազմական Նախարարի անձնաւորութիւնը այս նկատողութենէն դուրս կը մնայ:

3. Նախարարական Խորհուրդը նոյնպէս կէս առ կէս կը կազմուի՝ առաջին կէսը Դաշնակցական եւ երկրորդ կէսը Ժողովրդական եւ Ռամկավար անդամնե-

Generated on 2017-07-13 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

բէն: Պատերազմական Նախարարը անկուսակցական է եւ կ'անուանուի երկու կողմերու համաձայնութիւնովը:

4· Վարչապետը կ'ըլլայ արեւմտահայ մը, որ կը ներկայացուի Ազգ· Պատուիրակութեան կողմէ· Հանրապետութեան ներկայ խորհրդարանը կը վաւերացնէ անոր Վարչապետի պաշտօնը:

5· Ըստ որում Վարչապետը Փարիզ կը մնայ իբրեւ նախագահ խաղաղութեան Համաժողովին մեր Հայկական Պատուիրակութեան (տես յետագայ գլուխը), Նախարարական խորհուրդին մէջ իր անձնաւորութիւնը հաշուի կ'առնուի, թուի, հատուածի եւ հոսանքի տեսակէտներէն:

6· Վարչապետին Փարիզ մնալուն պատճառաւ, Հանրապետութեան ներկայ խորհրդարանը կ'ընտրէ դեր-Վարչապետ մը (vice-president), ով եւ ինչ հատուածէ ու հոսանքէ որ ինքը ուզէ: Դեր-Վարչապետին ներկայացուցած հատուածն ու հոսանքը հաշուի կ'առնուին Նախարարական խորհուրդի կէս առ կէսի կազմին մէջ:

7· Նախարարական միւս թղթապանակները կը բաշխուին կողմերու փոխադարձ համաձայնութեամբը: Անոնց յատկացումը կը մտնէ կնքուելիք վերջնական համաձայնագրի մէջ:

8· Եթէ ոեւէ պատճառով Նախարար մը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:26 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պակսի, իր յաջորդը կը նշանակուի միեւնոյն հատուածէն եւ հոսանքէն եւ միեւնոյն եղանակով, որով նշանակուած էր պակսող անդամը:

9· Նախարարական խորհուրդի անդամներուն մէջ Դաշնակցական հոսանքի պատկանող կէս մասը կը նշանակուի ներկայ խորհրդարանի մէջ մեծամասնութիւն կազմող նոյն կուսակցութեան բաժինէն (fraction), կամ ուրիշ ռեւէ պատասխանատու մարմինէ մը՝ թէ արեւելահայ եւ թէ արեւմտահայ Դաշնակցական Նախարարներու վերաբերմամբ· գալով միւս կէսը կազմող մասին՝ անոնցմէ արեւմտահայ նախարարները կը ներկայացուին Ազգային Պատուիրակութեան կողմէ եւ արեւելահայ նախարարները՝ ժողովրդական Կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:

10· Նախարարական խորհուրդը արտաքին թէ ներքին քաղաքականութեան վերաբերեալ եւ բացառիկ կարեւորութիւն ունեցող որոշումներ տալու ժամանակ — ինչպէս պատերազմի յայտարարութիւն եւ հաշտութեան կնքում, խորհրդարանական ընտրութիւններ, ընկերային բարեկարգումներ եւայլն — կը փնտռէ բոլոր անդամներու թիւին վրայ 7-ի՝ եթէ 9 է այդ թիւը, եւ 10-ի՝ եթէ 13 է, մեծամասնութիւնը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

11· Եթէ Նախարարական խորհուրդը պէտք ունենայ հրահանգներ տալու Պատուիրակութեան, այդ հրահանգները ֆուէարկուած կը համարուին միայն այն ժամանակ, երբ նախարարներու երկու-երրորդը միաբանած են որոշման վրայ։ Այս պարագային կը դիմուի նաեւ արտասահման կամ այլուր բացակայ գտնուող վարչապետին եւ ուրիշ նախարարներու ձայնին։

Բ· ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

1· Ամբողջական Հայաստանի Միացեալ Կառավարութիւնը կ'ունենայ միակ Պատուիրակութիւն մը, որ կը ներկայացնէ Հայ ազգը խաղաղութեան Համաժողովին մօտ։

2· Պատուիրակութիւնը կը բաղկանայ 7 անդամէ, որոնց 4-ը արեւմտահայ եւ 3-ը արեւելահայ։

3· Պատուիրակութեան նախագահն է Հանրապետութեան Կառավարութեան Վարչապետը։

4· Պատուիրակութեան կազմին մէջ՝ մէկ կողմէ Դաշնակցական Կուսակցութիւնը եւ միւս կողմէ ոչ-Դաշնակցականները ներակայացուած կ'ըլլան հաւասարթուով, այսինքն 3 առ 3· Նախագահ Վարչապետը, իբրեւ անկուսակցական դուրս

կը մնայ ուժերու այս յարաբերութենէն:

5. Պատուիրակութիւնը, նման կառավարութեան, կը մնայ անփոփոխելի մինչեւ Ամբողջական Հայաստանի Խորհրդարանի գումարումը: Անդամներու պակասման պարագային՝ անոնց յաջորդները կ'որոշուին նոյն հատուածէն եւ հոսանքէն եւ նոյն եղանակով, ինչպէս եղած էր պակսած անդամին համար:

6. Պատուիրակութեան արեւմտահայ անդամները կ'առնուին Արեւմտահայ Ազգային Համագումարին կողմէ ընտրուած ներկայ Ազգային Պատուիրակութեան անդամներու մէջէն՝ պահելով հոն ներկայացուած հոսանքներուն համեմատութիւնը. այն է՝ 2 ոչ-Դաշնակցական եւ մի Դաշնակցական. ի փոխարէն 3 արեւելահայ անդամները կ'որոշուին Հանրապետութեան ներկայ Խորհրդարանի կողմէ. այսպէս՝ 2 Դաշնակցական եւ մի ժողովրդական.— սոյն վերջինը կ'ընտրուի եւ ցոյց կը տրուի ժողովրդական կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:

7. Պատուիրակութիւնը լայն իրաւասութիւն կ'ունենայ բանակցելու Համաձայնական Պետութեանց եւ Խաղաղութեան Համաժողովին հետ եւ հետապնդելու՝ Համաժողովին ներկայացուած Ցի-

շատակագրին սահմաններուն մէջ՝ հայկական դատի լուծումը:

8. Պատուիրակութիւնը ինքը կը նշանակէ, երբ պէտք ըլլայ, վերոյիշեալ պետութեանց մօտ Հայաստանի դեսպանները: Եթէ կառավարութիւնը պէտք զգայ նոյն պետութեանց մօտ քաղաքական առաքելութիւններ ղրկելու, նախապէս կ'ստանայ այդ մասին Պատուիրակութեան հաւանութիւնը:

9. Պատուիրակութիւնը, նման կառավարութեան, իր գործունէութեան համար պատասխանատու է Ամբողջական Հայաստանի Խորհրդարանին:

Գ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

1. Հանրապետութեան ներկայ Խորհրդարանը սոյն համաձայնագիրը վաւերացընելէ ետք, երբ անոր հիման վրայ կազմուած նոր Առժամանակեայ Կառավարութիւնը կը ձեռնարկէ իր պաշտօնին, ինքզինք լուծուած կը հռչակէ, տալով իր օրէնսդրական իրաւունքները Առժամանակեայ Կառավարութեան եւ պարտք դնելով անոր վրայ շուտով մշակել ընտրութեանց հրահանգը եւ ընտրել տալ Ամբողջական Հայաստանի Խորհրդարանը:

2. Ամբողջական Հայաստանի Խորհրդարանը, որը իսկապէս Նախա-Խորհրդարանը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:27 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դարան (Pres-Parlement) մըն է, կը գործէ մինչեւ Սահմանադիր ժողովի (Constituent) գումարումը, որ միմիայն կարելի է հայկական դատին լուծումէն եւ հայկական հողամասերու գրաւումէն ետք:

3· Խորհրդարանը կը բաղկանայ ընդամէնը 80 անդամէ, որոնց կէսը կ'ընտրեն արեւմտահայերը եւ միւս կէսը՝ Արեւելեան Հայաստանի ժողովուրդը:

4· Նկատելով, որ Թրքահայաստանը գրաւուած չէ տակաւին, եւ արեւմտահայ ժողովուրդը մեծ մասամբ երկրէն դուրս կը գտնուի, արեւմտահայոց մասին ընտրութիւնները կը կատարուին երկրի մէջ եւ այլուր գտնուող բոլոր արեւմտահայերու կողմէ, ուր որ հնար է: Արտասահմանի մէջ գտնուող արեւմտահայերը այսպէսով յանձնառու եղած կը նկատուին, ինչպէս պէտք է յայտարարուի կանխաւ, Հայաստանի ֆաղաքացիներ դառնալու:

5· Խորհրդարանը օրինաւորապէս իր առաջին նիստը կը գումարէ, երբ ընտրուած արեւմտահայ ներկայացուցիչներու առնուազն երեք-չորրորդը եւ Արեւելեան Հայաստանի ներկայացուցիչներուն նոյնպէս երեք-չորրորդը հաւաքուած ըլլան:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 12:04 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դ. ՎԱՒԵՐԱՑՈՒՄ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

Ներկայ համաձայնագիրը այժմու խորհրդարանին կողմէ վաւերացուելէ եւ երկու կողմի լիազօրներու ստորագրութիւնը ստանալէ ետք՝ կ'ստանայ օրէնքի ոյժ եւ կը հրատարակուի:

Հրատարակութիւնը կը կատարուի բանաձեւով մը, որուն մէջ կը շեշտուի թէ նախկին Թրքահայաստանն է, որ կազմած է իր կառավարութիւնը եւ անոր միացած է Անդրկովկասի մէջ իրականապէս (*de-facto*) գոյութիւն ունեցող Արեւելեան Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը, թէ Երեւանը ընդունուած է իբրեւ առժամեայ մայրաքաղաք եւ թէ Ամբողջական Հայաստանի վերջնական մայրաքաղաքը պիտի ըլլայ նախապէս Թուրքիոյ մաս կազմող Հայաստանի քաղաքներէն մին:

Վ. ԹԷՔԷԵԱՆ

Երեւան, 21 Հոկտեմբեր 1919

Generated on 2017-07-13 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

«ԾՐԱԳՐԻ» ԷՈՒԹԻՒՆԸ

Եթէ ամփոփելու լինենք Պրն. Վ. Թէքէեանի ներկայացրած ծրագրի էութիւնը, կը տեսնենք, որ կ՝ստացուի հետեւեալ պատկերը.

Հայաստանի Պարլամենտը պէտք է լուծուի, *մինչդեռ Պարիզում խօսքը* դադարի *մասին էր։ Պիտի կազմուի նոր կառավարութիւն, որ* փաստօրէն *իրաւունք չպիտի ունենայ ընկերային խնդիրներով զբաղուելու, պատերազմի, հաշտութեան, եւ այլ հարցեր լուծելու։ Պետութեան արտաքին քաղաքականութիւնն ամբողջապէս պէտք է վարէ Պարիզ նստած Պատուիրակութիւնը, որը իրապէս զերծ պիտի լինի կառավարութեան վերհսկողութիւնից ու պիտի գործէ անկօնտրոլ։ Նոյնիսկ դեսպաններ նշանակելու իրաւունքը Պատուիրակութեան է վերապահւում, եւ կառավարութիւնը կարող է պետութիւնների մօտ քաղաքական առաքելութիւններ ուղարկել միայն Պատուիրակութեան հաւանութեամբ։ Եթէ կառավարութիւնը պէտք զգայ հրահանգներ տալ Պատուիրակութեան, պէտք է ունենայ բոլոր նախարարների ձայների երկու-երրորդը։ «Այս պարագային կը դիմուի նաեւ արտասահման կամ այլուր բացակայ գտնըւող վարչապետին եւ ուրիշ նախարարներու ձայնին»։ Թէեւ «ծրագրի» մէջ ո՛չ մի*

Generated on 2017-07-13 11:29 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

տեղ չէ յիշուած Պօղոս Նուպարի անունը, բայց որովհետեւ ամէն անգամ չեշտուում է, որ վարչապետը եւ Պատուիրակութեան պետը պէտք է լինի միեւնոյն անձը, որ «վարչապետը Փարիզ կը մնայ», ակընյայտնի է, ինչպէս յետոյ էլ հաստատուեց, որ առաքեալների պայմանն է, որ վարչապետը եւ Պատուիրակութեան պետը լինի Պօղոս Նուպարը: Եւ որովհետեւ «ծրագրի» կէտերն այնպէս են կազմուած, որ ամէն իրաւունք ամփոփուում է վարչապետի ու Պատուիրակութեան նախագահի ձեռքը, փաստօրէն կառավարութիւնը կը դառնայ լոկ մի խրտուիլակ, իսկ Հայաստանի իրական վարիչը, բացարձակ եւ անսահմանափակ իշխանը պէտք է լինէր Պօղոս Նուպար փաշան: Զնախապաշարուած, անաչառ ընթերցողը Պրն. Թէքէեանի «ծրագիրը» կարդալուց յետոյ ուրիշ կարծիք չի կարող կազմել: Եւ եթէ դուք հակադրէք այդ «ծրագիրը» այն տրամադրութիւններին, որ ընդհանուր է Հայաստանում, այն ժողովրդական-յեղափոխական հայեացքներին, որով ապրում է Հայաստանը, պարզ կը լինի այն անտեղեակութիւնն ու կտրուածութիւնը մայր-երկրից, որով վարակուած են Պարիզից Հայաստանը կառավարել ուզող գործիչները:

Այս դեռ բաւական չէ. երեւի, տպա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւորութիւնը կատարեալ անելու համար, Պօղոս Նուպարի առաջարկութիւնների մէջ մտցուած է եւ կուսակցական մօմենտը.— «Նախարարական խորհուրդը նոյնպէս կէս առ կէս կը կազմուի՝ առաջին կէսը Դաշնակցական եւ երկրորդ կէսը Ժողովրդական եւ Ռամկավար անդամներէ». այս վերջին մասի «արեւմտահայ նախարարները կը ներկայացուին Ազգային Պատուիրակութեան կողմէ եւ արեւելահայ նախարարները՝ Ժողովրդական Կուսակցութեան պատասխանատու մարմնին կողմէ»։

Յետոյ, Պարիզի Պատուիրակութիւնը նոյնպէս պիտի կազմուի նոյն սկզբունքով — հաւասար թուով Դաշնակցական եւ ոչ-դաշնակցական կուսակցութիւններից. «Նախագահ վարչապետը, իբրեւ անկուսակցական, դուրս կը մնայ ուժերու այս յարաբերութենէն»։ Պատուիրակութեան մէկ անդամը «կ՚ընտրուի եւ ցոյց կը տրուի Ժողովրդական Կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ»։

Մենք դիտմամբ այսքան երկար կանգ առինք Պօղոս Նուպարի ծրագրի վրայ, որպէսզի ընթերցողը համոզուի, թէ այդ ծրագրի հեղինակների մտահոգութիւնը ոչ թէ երկու հատուածների միութիւնն է, այլ «Ռամկավար եւ Ժողովրդական կուսակցութիւնների» դատը պաշտպանելն է.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

մի դեր, որ, յամենայն դէպս, Ազգային Պատուիրակութեան չի սազում։ Ազգային Պատուիրակութիւնը պէտք է լինէր խստապէս անկուսակցական եւ խօսէր միայն արեւմտահայ հատուածի անունից, իսկ եթէ նա կանգնում էր կուսակցական տեսակէտի վրայ, այն ժամանակ նա չպէտք է սահմանափակուէր միայն «Ռամկավար եւ Ժողովրդական» կուսակցութիւններով եւ Պրն. Թէքէեանի ու Ցարութիւնեանի կողքին պիտի դնէր եւ մի Դաշնակցական։ Այս հանգամանքը դիտել տրուեց եւ յետագային, բայց Պրն. Թէքէեանի տուած բացատրութիւնները ամենեւին չէին կարող գոհացուցիչ համարուել։

Այսպիսով, ուրեմն, Պօղոս Նուպարի առաքելութիւնն իր կազմով միակողմանի էր, նրա առաջարկած ծրագիրը՝ նոյնպէս միակողմանի ու չափազանցուած։ Նա նոյնիսկ աւելին էր պահանջում, քան այն, ինչի մասին Պարիզում արդէն համաձայնութիւն գոյացել էր։ Այսպէս, օրինակ, Պարիզում խօսւում էր Պարլամենտի դադարի մասին, իսկ այստեղ դրուում էր լուծման պահանջ։ Այս, ինչպէս յետոյ երեւաց, արուած էր արեւելցու վաճառականի հաշուով՝ «չատ պահանջիր, որ ուզածդ ստանաս»։ Պարզապէս, սակարկութեան տեղ էր թողնուած, եւ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:30 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այդ սակարկութիւններին է, որ կ'անցնենք յաջորդ յօդուածով:

Աւելցնենք նաեւ, որ Հայաստանի Հանրապետութեան ղեկավարները, չնայած վերոյիշեալ թերութիւնների, գտնում էին անհրաժեշտ եւ հնարաւոր համերաշխութեան իրականացումը: Քաղաքական պատասխանատու վայրկեանի կատարեալ գիտակցութեամբ եւ ընդհանուր լեզու գտնելու անկեղծ ցանկութեամբ՝ նրանք աշխատում էին հարթել բոլոր խոչընդոտները և գլուխ բերել միութիւնը հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր կենդանի տարրերի: Այս տրամադրութեամբ ահա սկսուեցին բանակցութիւնները:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բանակցութիւնները սկսուեցին Հոկտ. 29-ին, Հանրապետութեան նախարարապետի սենեակում, նախարարապետ Ա. Խատիսեանի հրաւէրով ու նախագահութեամբ: Թէ Ա. Խատիսեանի եւ թէ երկու կողմերի ներկայացուցիչներ՝ Վ. Թէքէեանի եւ Ս. Վրացեանի ճառերի մէջ շեշտը դրուում էր մէկ հիմնական տեսակէտ — բոլոր միջոցներով աշխատել հայ ժողովրդի երկու հատուածների միութիւնն ու Հայաստանի ամբողջացման գործը:

Առաջին նիստում կարդացուում է Պօղոս Նուպարի ուղարկած «ծրագիրը» եւ պարզուում են նրա զանազան կէտերը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:31 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

այդ սակարկութիւններին է, որ կ'անցնենք յաջորդ յօդուածով:

Աւելցնենք նաեւ, որ Հայաստանի Հանրապետութեան ղեկավարները, չնայած վերոյիշեալ թերութիւնների, գտնում էին անհրաժեշտ եւ հնարաւոր համերաշխութեան իրականացումը: Քաղաքական պատասխանատու վայրկեանի կատարեալ գիտակցութեամբ եւ ընդհանուր լեզու գտնելու անկեղծ ցանկութեամբ՝ նրանք աշխատում էին հարթել բոլոր խոչընդոտները և գլուխ բերել միութիւնը հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող բոլոր կենդանի տարրերի: Այս տրամադրութեամբ ահա սկսուեցին բանակցութիւնները:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բանակցութիւնները սկսուեցին Հոկտ. 29-ին, Հանրապետութեան նախարարապետի սենեակում, նախարարապետ Ա. Խատիսեանի հրաւէրով ու նախագահութեամբ: Թէ Ա. Խատիսեանի եւ թէ երկու կողմերի ներկայացուցիչներ՝ Վ. Թէքէեանի եւ Ս. Վրացեանի ճառերի մէջ շեշտը դրուում էր մէկ հիմնական տեսակէտ — բոլոր միջոցներով աշխատել հայ ժողովրդի երկու հատուածների միութիւնն ու Հայաստանի ամբողջացման գործը:

Առաջին նիստում կարդացուում է Պօղոս Նուպարի ուղարկած «ծրագիրը» եւ պարզուում են նրա զանազան կէտերը:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:32 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երկրորդ նիստից արդէն կողմերը ներկայացնում են իրենց տեսակէտները, որոնք յետագայ նիստերում մանրամասնուում ու ձեւակերպւում են, մինչեւ որ հընարաւոր է լինում յստակ ու որոշ բանաձեւել երկուսի պահանջներն էլ։

Երկրորդ նիստում իր կողմի տեսակէտը Ս. Վրացեան ձեւակերպում է հետեւեալ ձեւով.

«Մեզ առաջնորդող գլխաւոր ելակէտը պիտի լինի առաջիկայ խորհրդակցութեան ժամանակ Մայիսի 28-ի ակտը, որով մեր կառավարութիւնը յայտարարել է Միացեալ եւ Անկախ Հայաստան։ Այդ ակտն ընդունուած է նաեւ Պարիզի Ազգային Պատուիրակութեան կողմից, որը դեռ դրանից շատ առաջ արել էր նոյն յայտարարութիւնը Ամբողջական Հայաստանի մասին։ Մենք պէտք է ընդունենք Հայաստանի Հանրապետութեան անկախ գոյութիւնը, որը ունի իր կառավարութիւնը եւ իր խորհրդարանը, եւ այդ ելակէտն իբրեւ հիմք ընդունելով՝ անենք մեր յետագայ առաջարկները»։

Ապա անցնելով կոնկրետ խնդիրների՝ ընդունում է, «որ պէտք է թոյլ տալ լրացուցիչ ընտրութիւններ կատարել թէ այժմեան Հայաստանի այն վայրերում, ուր նրանք տեղի չեն ունեցել, եւ թէ Թիւրքահայաստանի սահմաններում, ուր

Generated on 2017-07-13 11:32 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

հնարաւոր է, նոյնպէս եւ արտասահմանի կարեւորագոյն հայկական գաղութներում»:

«Կառավարութեան կազմի մէջ պէտք է մտցնել նաեւ արեւմտահայ հատուածի ներկայացուցիչներին, նոյնիսկ աւելի մեծ թուով, քան արեւելահայերի ներկայացուցիչները»: «Պարիզում գոյութիւն ունեցող երկու Պատուիրակութիւններն էլ պէտք է միանան եւ պիտի կազմեն մի Պատուիրակութիւն, որը պիտի գործի Ամբողջական Հայաստանի անունից եւ որը կազմուած կը լինի թէ արեւմտահայերից եւ թէ արեւելահայերից: Համամիտ ենք, որ այդ Պատուիրակութեան նախագահը լինի Պօղոս Փաշա Նուպարը»: Կառավարութիւնը կարելի է այժմ եւ եթ վերակազմել, իսկ ներկայ խորհրդարանը կը շարունակէ իր նիստերը, մինչեւ լրացուցիչ ընտրութիւններ կատարուելը: Երաշխաւորութիւն կը տրուի, որ մինչեւ խորհրդարանի լրանալը ստեղծուած կառավարութիւնն ու Պատուիրակութիւնը կը մնան անփոփոխ: Նախարարապետը չի կարող միեւնոյն ժամանակ լինել ե՛ւ Պարիզի Պատուիրակութեան պետ, որովհետեւ կառավարութեան գլուխը պէտք է գտնուի երկրում: Ոչինչ դէմ չունենք, որ նախարարապետը լինի «Թուրքահայ», ընդհակառակը, ցանկալի է այդ: Անպա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:33 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տեհութիւն է նաեւ Պատուիրակութեան նախագահին լոկ պատուոյ տիտղոսի համար վարչապետ անուանել։

Վ. Թէֆէեանը յայտնում է, որ իրենք ընդունում են Մայիսի 28-ի ակտի առաջին մասը միայն, իսկ երկրորդը մերժում են։ Կօալիցիօն կազմելուց յետոյ «ներկայ խորհրդարանի նոյնիսկ առժամանակեայ գոյութիւնը դժուար է թոյլ տալ»։ Խորհրդարանին պէտք է արձակուրդ տալ, իսկ յատուկ խնդիրների համար կարելի կը լինի հրաւիրել նիստի (Ն. Տէր-Ստեփանեանը հակառակ է այս վերջին մըտքին)։ Վարչապետը եւ Պատուիրակութեան նախագահը պէտք է ամփոփուին մէկ անձի մէջ։

Ն. Տէր-Ստեփանեանն աւելացնում է, որ «կարող ենք մեր մէջ ներքին համաձայնութիւն կայացնել, որ Պատուիրակութեան նախագահը օգտուի միայն վարչապետի տիտղոսով եւ Հանրապետութեան ներքին գործերի մէջ չխառնուի, եւ այդ բանում մենք կարող ենք երաշխաւորել»։

Երկրորդ նիստում խօսւում է կառավարութեան կազմութեան մասին։ Ս. Վրացեանն ասում է.

«Երկու սկզբունք է առաջարկուած մեզ ներկայացուած ծրագրի մէջ. 1) որ կառավարութիւնը բաղկացած լինի արեւ-

մըտահայ եւ արեւելահայ ներկայացուցիչներից, եւ 2) որ նրա մէջ ներկայացուած լինեն կուսակցութիւնները: Մենք պէտք է կանգնենք հատուածական ներկայացուցչութեան վրայ եւ աշխատենք, որ ամենալայն հնարաւորութիւն տրուի արեւմտահայ հատուածին մասնակցելու կառավարութեան մէջ: Այստեղ նշանակուած է կառավարութեան կէսը նշանակել արեւմտահայերից, փափաքելի է նոյնիսկ, որ կէսից աւելին տրուի նրանց:... Կառավարութիւնը պիտի գործի ընդհանրապէս ընդունուած եղանակով, այսինքն՝ վճիռները տալով ձայների մեծամասնութեամբ եւ ոչ այն եղանակով, ինչպէս առաջարկուած է Պատուիրակութեան կողմից: «Կառավարութեան մէջ որոշ հոսանք պէտք է կազմէ մեծամասնութիւն, որպէսզի նա լինի գործունակ». «այս երկրում հեղինակաւոր եւ զօրեղ իշխանութիւն կ՚ունենայ այն կառավարութիւնը, որ վայելում է լայն զանգուածների վստահութիւնը. լայն զանգուածները իրենց կամքը արտայայտեցին՝ վստահութիւն յայտնելով Դաշնակցութեան: Ստեղծել մի կառավարութիւն, որի մէջ Դաշնակցութիւնը փաստօրէն փոքրամասնութիւն կ՚ունենայ, կը նշանակէ անվստահութիւն յայտնել ժողովրդի կամքին, այսինքն ստեղծել մի իշխանութիւն, որ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յենուած չլինի ժողովրդի կամքի վրայ»։ Միացեալ Կառավարութեան գործունէութեան եւ ղեկավարող սկզբունքների մասին պէտք է նախօրօք համաձայնութեան դալ։

Վ. Թէֆէեան եւ ընկերները պնդում են, որ կառավարութիւնը պէտք է կուսակցական տեսակէտով էլ կազմուի կէս առ կէսի սկզբունքով՝ նախ, որովհետեւ ժողովրդի կամքը դեռ յայտնի չէ արտասահմանում, իսկ երկրորդ, որովհետեւ «Դաշնակցութիւնը յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւն է, եւ մենք պէտք է գործ ունենանք այնպիսի կառավարութիւնների հետ, որոնք սոցիալիստական չեն»։ «Մանդատէր պետութիւնը առանձին դժգոհութեամբ պիտի վերաբերուի, եթէ տեսնի մեր մէջ Դաշնակցական մեծամասնութեամբ կազմըւած կառավարութիւն, այդ դէպքում թերեւս նա աշխատի ճնշել մեր ներքին ինքնավարութիւնը», յարում է Պրն. Տէր-Ստեփանեանը։ Բացի այդ՝ Դաշնակցական մեծամասնութիւն ունեցող կառավարութիւնը արգելք կը հանդիսանայ կապիտալի մուտքին ու զարգացման։

Չորրորդ նիստում խօսւում է կառավարութեան կազմի, նախարարների թուի եւ յարակից գործնական խնդիրների մասին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հինգերորդ նիստում Մ. Յարութիւնեանն ամփոփում է մեր կողմի առաջարկները. «մեզ համար անընդունելի է ներկայ պարլամենտի լուծումը... Մօտիկ ապագայում պարլամենտ է մտնելու առաջիկայ տարուայ բիւտջէի հարցը, եւ դրա քննութիւնը կարող է տեւել գոնէ երեք ամիս, եւ աչքի առաջ ունենալով թէ այդ հարցը եւ թէ ուրիշ խնդիրներ, որոնք կարող են ծագել, մենք չենք կարող ընդունել երկար ժամանակով պարլամենտի նիստերը դադրեցնելու առաջարկը. կարելի է դադար տալ պարլամենտին, ոչ աւելի, քան մի ամիս, առ առաւելն ամիս ու կէս ժամանակով:

«Գալով պարլամենտի կազմին՝ մենք ընդունում ենք, որ նա պիտի լրացուի ընտրութեամբ, նախ՝ մեր Հայաստանի սահմաններում — Ղարսի շրջանի, Կիլիկիա եւ ապա գաղութներում... Պարլամենտի անդամների այժմուայ թիւը (80 հոգի) կրճատել մենք չենք կարող, բայց կարող ենք հաւասարեցնել պարլամենտի մէջ արեւմտահայոց թիւը արեւելահայերի թուին:... Ընտրութիւնները պէտք է լինեն մեր պետութեան ընտրական օրէնքով,— որոշ չեղումով: Կառավարութեան վերաբերմամբ մենք ընդունում ենք կօալիցիօն սկզբունքը, հատուածական տեսակէտից ընդունում ենք երկու հատ-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:39 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ւածների հաւասարութիւն, նոյնիսկ պատ
բաստ ենք աւելի տեղ տալ արեւմտահայ
հատուածին, բայց կուսակցական տեսա-
կէտից այդ կօալիցիօնի մէջ մեր կուսակ-
ցութիւնը պիտի ունենայ մի ձայնի առա-
ւելութիւն, այն է՝ 9 հոգուց 5, կամ 13
հոգուց 7 Դաշնակցական։...Զենք կարող
ընդունել, որ Պօղոս Փաշա Նուպարը՝ մը-
նալով Պարիզում իբրեւ Պատուիրակու-
թեան նախագահ, լինի միեւնոյն ժամա-
նակ նախարարապետ, թէկուզ անուանա-
կան։... Ընդունում ենք Պօղոս փաշային
իբրեւ Միացեալ Պատուիրակութեան նա-
խագահ»։

Վ. Թէքէեան այս բոլորի մէջ ոչ մի գի-
ջում չի տեսնում եւ գտնում է անընդու-
նելի։

Նոյն նիստում խօսք է լինում Ազգային
Պատուիրակութեան եւ առաքելութեան
կազմի մասին։ Պ. Թէքէեանը նորից ձե-
ւակերպում է իրենց պահանջները եւ սրա-
նով խորհրդակցութիւնը փակւում է։

Վեցերորդ նիստը լինում է շատ կարճ։
Արձանագրութիւնները կարդալուց յե-
տոյ, որոշւում է, որ մեր կողմից բանա-
ձեւուեն մեր վերջնական առաջարկու-
թիւններն ու դիտողութիւնները, որ եւ
արւում է եւ երեք հոգու ստորագրու-
թեամբ, Նոյեմբեր 4-ին յանձնւում է Պ.
Վ. Թէքէեանին։ Առաջ ենք բերում այդ
գրութիւնն ամբողջութեամբ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՊԱՏԱՍԽԱՆ ԱԶԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ՝ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով Ազգային Պատուիրակութեան ներկայացրած առաջարկները Ամբողջական Հայաստանի Պարլամենտի, Կառավարութեան եւ Պատուիրակութեան վերակազմութեան մասին՝ մենք ամենից առաջ նկատում ենք, որ նրանց մէջ երկուութիւն կայ: Մի կողմից այդ առաջարկութիւնները հիմնուած են հատուածական, միւս կողմից կուսակցական տեսակէտի վրայ: Հատուածական տեսակէտով պահանջւում է յիշեալ պետական մարմինների մէջ կէս առ կէս ներկայացուցչութիւն երկու հատուածների. կուսակցական տեսակէտով պահանջւում է Դաշնակցութեան փոքրամասնութիւն՝ Կառավարութեան եւ Պատուիրակութեան միջեւ ժողովրդական քուէարկութեամբ ընտրուած ներկայ Պարլամենտի լուծումը: Այնուհետեւ, Ազգային Պատուիրակութեան կողմից ուղարկուած բանակցողների կազմը եւ բերած առաջարկները այն տպաւորութիւնն են թողնում, որ մեզ հետ բա-

Generated on 2017-07-13 11:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

նակցում է ոչ թէ Արեւմտեան հայութեան մէկ մասին ներկայացուցչութիւնը, այլ առանձնապէս Ռամկավար եւ Ժողովրդական կուսակցութիւնները: Այսպէս, Կառավարութեան կազմի նկատմամբ յօդ. 3-ում ասուած է, որ նրա կէսը պիտի կազմուած լինի Ռամկավար եւ Հայ Ժողովրդական կուսակցութեան անդամներից: Միւս կողմից, Ազգային Պատուիրակութիւնը, որ կազմուած է երկու Դաշնակցական եւ չորս ոչ-դաշնակցական անդամներից, իբրեւ բանակցող ուղարկել է միայն մի կողմի ներկայացուցիչներից, մինչդեռ հէնց գործի յաջողութեան համար բնական կը լինէր, որ իբրեւ բանակցողներ ուղարկուէին բոլոր հոսանքներից, որպէսզի Ազգային Պատուիրակութիւնը հանդէս գար իբրեւ ներկայացուցչութիւն ամբողջ արեւմտահայ ժողովրդի եւ արտաքին աշխարհում այն տպաւորութիւնը չստացուէր, թէ հետապնդւում են կուսակցական նպատակներ: Ապա, բանակցողների կազմը այստեղ լրացնելու համար հրաւիրուել է իբրեւ երրորդ անդամ ոչ այլ ոք, քան Պրն. Սամսոն Յարութիւնեանը, Հայ Ժողովրդական կուսակցութեան պարագլուխը եւ հիմնադիրը, Հանրապետական ներկայ Պարլամենտի եւ Կառավարութեան դէմ կռիւ մղող ամենագործօն անձերից մէկը: Այս սա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:40 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կայն արգելք չպիտի հանդիսանայ, որ մեր բանակցութիւններն առաջ գնան, որովհետեւ մեզ զբաղեցնողը ոչ թէ անձերն են կամ կուսակցական նպատակները, այլ հայ ժողովրդի շահը եւ բուռն ձգտումը՝ Ամբողջական Հայաստանը իրականացած տեսնել:

Աչքի առաջ ունենալով առարկայական պայմանները, ինչպէս նաեւ հայ ժողովրդի բազմիցս արտայայտուած կամքը, մենք կարծում ենք, որ Ամբողջական Հայաստանի իրականացման համար կարելի են հետեւեալ փոփոխութիւններն ու լրացումները Հայաստանի Պարլամենտի, Կառավարութեան եւ Պատուիրակութեան մէջ:

Ամենից առաջ պէտք է պետական բոլոր մարմինների մէջ արեւմտեան հայերին ապահովել ոչ միայն կէսը, ինչպէս Ազգային Պատուիրակութիւնն է առաջարկում, այլ առհասարակ ամէն խտրութիւն արեւմտահայերի եւ արեւելահայերի միջեւ վերջացնել: Իսկ մենք կ'ուզէինք որ նոքա ամէն տեղ լինեն կէսից էլ աւելի: Սակայն անարդար ենք գտնում Ազգային Պատուիրակութեան կուսակցական պահանջները, որ կարելի չէ բաւարարել գծուած չափով, քանի որ ուժերի իրական փոխ-յարաբերութիւնը բոլորովին այլ բան է թելադրում: Յայտնի է, որ մէկից աւելի ան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

գամ կատարուած ընտրութիւնների ժամանակ Դաշնակցութիւնը ստացել է հայ ժողովրդի ձայների ճնշող մեծամասնութիւնը, ինչ որ չի կարելի անտես առնել կառավարութիւն կազմելու միջոցին: Այս է պատճառը, որ մենք պատրաստ ենք բաւարարելու Ազգային Պատուիրակութեան հատուածական բոլոր առաջարկութիւնները, սակայն հնարաւոր չենք համարում զոհացում տալ նորա կուսակցական պահանջներին:

Ազգային Պատուիրակութեան առաջադրած գլխաւոր կէտերի վերաբերմամբ մեր տեսակէտը հետեւեալն է.—

1.— Փարիզի Պատուիրակութիւնը կազմել առանց հատուածական եւ կուսակցական խտրութեան. ցանկալի է որ արեւմտահայերը այնտեղ մեծամասնութիւն լինեն. իսկ կուսակցական տեսակէտից Դաշնակցութիւնը կարող է լինել փոքրամասնութիւն: Այսպէս, եթէ Պատուիրակութիւնը կազմուած է երեք անդամից, Դաշնակցութիւնը կը տայ մէկ անդամ., իսկ եթէ հինգից՝ երկու անդամ: Երկու դէպքումն էլ Պատուիրակութեան մէկ անդամը պիտի լինի անկուսակցական: Համաձայն ենք, որ Պրն. Պօղոս Նուբարը լինի Միացեալ Պատուիրակութեան նախագահ, սակայն Պատուիրակութիւնը պիտի գործէ Հայաստանի Հան-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բապետական Կառավարութեան հրահանգներով:

2.— Կառավարութեան կազմի մէջ Դաշնակցութիւնը պիտի ունենայ կէսից մէկ անդամ աւելի: —Պատուիրակութեան նախագահը եւ Վարչապետը պիտի լինեն տարբեր անձեր. թէ Վարչապետը եւ թէ բոլոր նախարարները պիտի մնան երկրում եւ մեր երկրում գործեն: Անընդունելի է Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչների առաջարկը, որ Պօղոս Նուբարին տրուի Վարչապետութիւն, թէկուզ իբրեւ լոկ տիտղոս:

3.— Ներկայ Պարլամենտի լուծման մասին խօսք լինել չի կարող, նա պէտք է շարունակէ իր գործունէութիւնը: Անհնարին է նաեւ նրան դադար տալ մինչեւ Հանրապետութեան առաջին բիւտջէի քննութեան աւարտումը: Համամիտ ենք, եւ դա մեր փափաքն է, որ Պարլամենտի արեւմտահայ անդամների թիւը հաւասարեցուի արեւելահայերին: Կրնատել պատգամաւորների այժմեան թիւը իրաւական հիմունքներով հնարաւոր չէ: Արեւմտահայ նոր պատգամաւորների մուտքը Պարլամենտի մէջ պէտք է կատարել լրացուցիչ ընտրութեամբ: Մենք կարծում ենք որ ընտրութիւններ պիտի նշանակուին Հայաստանի այն մասերում, ուր դեռեւս ընտրութիւն չի եղել. ինչպէս օրինակ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:41 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ղարսի շրջանը, Կիլիկիա եւ արտասահմանեան գաղութներում այսինքն՝ Պոլիս, Բալկաններ, Եգիպտոս, Ամերիկա, Սեւ Ծովի ափերը եւ այլ տեղեր, ուր հընարաւոր է: Ընտրութիւնները պիտի լինեն Հայաստանի Հանրապետութեան օրէնքներով, որոնք պէտք է յարմարեցուին տեղական պայմաններին: Արեւմտահայերի վերաբերմամբ կարելի է ընդունել, որ մի պատգամաւոր ընտրուի ոչ թէ 20,000-ից, ինչպէս եղել է Հայաստանի Պարլամենտի ընտրութիւնը, այլ աւելի պակաս ազգաբնակութիւնից: Նկատելով Պարլամենտի անդամների այժմեան կազմը հատուածական տեսակէտից, անհրաժեշտ կը լինի ընտրել կրկին 51 պատգամաւոր, որով հատուածները թուով կը հաւասարուեն իրար, իսկ Պարլամենտի անդամների ընդհանուր թիւը կը դառնայ 131:

4.— Գալով Ազգային Պատուիրակութեան վերջին առաջարկին, որ Հայաստանի Հանրապետութիւնը իրեն միացած յայտարարի անկախ Թիւրքաց Հայաստանին, սկզբունքային ռեւէ առարկութիւն չունինք, սակայն չենք տեսնում այն ձեւը, որ քաղաքական ստեղծուած պայմաններում կարող էր հնարաւոր դարձնել այդ ակտը: Ընդհակառակը քաղաքական դէպքերի դասաւորումով, Հայաստանի ներկայ Հանրապետութիւնը դարձել է յենա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բանը, որի վրայ կանգնած՝ հայ ժողովուրդը պիտի շարունակէ Հայաստանի ամբողջացման գործը: Մենք չենք կարողանում երեւակայել Հայաստան առանց Տաճկահայաստանի կամ առանց Ռուսահայաստանի:

Ահաւասիկ այն փոփոխումներն ու լրացումները, որ մենք անում ենք Ազգային Պատուիրակութեան առաջարկութիւնների նկատմամբ:

Ս. ՎՐԱՑԵԱՆ
ՄԱՐՏ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

4-ին Նոյեմբերի 1919 թ.
Երեւան

Այս գրութեան մէջ յստակ կերպով արտայայտուած են մեր պաշտպանած սկզբունքները եւ արուած դիտողութիւնները բնաւ նպատակ չեն ունեցել մաղաչափ անգամ խանգարել բանակցութիւնների ընթացքը: Մեր նպատակն էր որոշ կերպով ցոյց տալ մեր ղեկավար տեսակէտները, որպէսզի մեր դիմացի մարդկանց համար պարզ լինի, թէ մենք ինչպէ՞ս ենք դնահատում ստեղծուած դրութիւնը եւ ինչքա՛ն արժէք ենք տալիս համերաշխութեան, որի յաջողութեան հիմքերն էլ դրծում ենք:

Մեզ հետ բանակցողները, դժբաղդա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բար, սխալ են հասկացել մեզ եւ հարցը դրել են բոլորովին ուրիշ հողի վրայ, ինչ որ կը տեսնենք յաջորդ գլխում:

Մեր Նոյեմբեր 4-ի գրութեան Պօղոս Նուպարի առաքելութիւնը հետեւեալ պատասխանն է տալիս Նոյեմբեր 6-ին, որ առաջ ենք բերում նոյնպէս ամբողջութեամբ:

ՓՈԽ-ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՂՆԵՐՈՒ ՆՈՅԵՄԲԵՐ 4 ԹՈՒԱԿԱՆԱՒ ՆԵՐԿԱՑԱՑՈՒԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱԳՐԻՆ

Պատասխանելով Ամբողջական Հայաստանի Խորհրդարանի, Կառավարութեան և Պատուիրակութեան վերակազմութեան մասին մեր առաջարկներուն դէմ հանուած առարկութիւններուն՝ *կը յայտնենք.*

Ա.— Ազգային Պատուիրակութիւնը Մայիս 28-ի ակտին օրինական եւ քաղաքական սխալը դարմանելու համար առաքելութիւն մը ղրկել որոշեց — փոխանակ պարզապէս հրապարակաւ բողոքելու անոր դէմ — միմիայն տեղի տալով Հանրապետութեան Պատուիրակութեան պընդումին, եւ այդ առաքելութիւնը ղրկեց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

միմիայն այն ատեն, երբ Պն· Խատիսեան պատասխանելով Պրն· Ահարոնեանի հեռագրին—ուր յայտնուած էր, թէ "արեւմըտահայութեան ներկայացուցչութիւնն եղող Ազգային Պատուիրակութիւնը" անհամաձայն է Մայիս 28-ի ակտին եւ առաքելութիւն մը պիտի ղրկէ անոր սխալները դարմանելու համար — բարի գալուստ մաղթեց առաքելութեան եւ խնդրեց փութացնել անոր առաքումը: Այդ իսկ պատասխանով Հանրապետութեան Կառավարութիւնը կ'ընդունէր այն, ինչ որ հիմը կը կազմէ բանակցութիւններուն, այսինքն թէ Ազգ· Պատուիրակութիւնը քաղաքական օրինաւոր ներկայացուցչութիւնն է ամբողջ արեւմտահայութեան եւ ոչ թէ արեւմտահայութեան մէկ հատուածին եւ կամ անոր մէջ գործող այս կամ այն կուսակցութեան: Անընդունելի է, ուրեմն, որ առաքելութեան Երեւան հասնելէն վերջ առարկութիւններ յարուցուին անոր եւ զայն ղրկող մարմինին բնոյթին եւ իրաւասութիւններուն մասին:

Բ·— Առարկութիւնները, եթէ նոյնիսկ անոնք վերը յիշուած պատճառներով անընդունելի չըլլային, պէտք էր, որ յարուցուէին բանակցութիւններու սկիզբէն առաջ, երբ առաքելութիւնն իր առաջարկութիւնները, որոնց վրայ կը հիմնուին առարկութիւնները, գրաւոր ներկայա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցուց, եւ ոչ թէ վարելէ վերջ շարաթ մը տեւող բանակցութիւններ, որոնց ընթացքին մեզ հետ բանակցողները ընդունած էին, ինչպէս կ՚ապացուցանեն արձանագրութիւնները, Ազգ. Պատուիրակութեան եւ, հետեւաբար իր ղրկած առաքելութեան ամբողջ արեւմտահայութեան ներկայացուցչութիւնն ըլլալու հանգամանքը:

Այս հիմնական դիտողութիւնները ընելէ վերջ, մենք կը յայտնենք հետեւեալը.

Թէ մատնանշուած երկուութիւնը, եթէ երկուութիւն կայ, կը բղխի նոյնինքն ներկայ Կառավարութեան եւ Խորհրդարանի արհեստական եղանակով ստեղծուած պատկերէն, որուն փոփոխումը նըպատակն իսկ կը կազմէ ներկայ բանակցութիւններուն, ինչպէս այդ ընդունած են բանակցող երկու կողմերն ալ: Արդարեւ, Ազգային Պատուիրակութիւնը, որ ամբողջ արեւմտահայութիւնը կը ներկայացնէ, երբ ինքզինք գտաւ Մայիսի 28-ի ակտին առջեւ, զայն քննելով տեսաւ, որ այդ ակտը կարելի եղած էր կատարել միմիայն արհեստական կերպով Խորհրդարան մտցուած կուսակցական մեծամասնութեան շնորհիւ, եւ այդ ակտին յաջորդող բոլոր իրադարձութիւնները, ինչպէս նոր միատարր խորհրդարանի ընտրութիւն եւ միատարր դահլիճի կազմութիւն,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:42 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հետեւանք էին այդ ակտին ապօրինութեան եւ հնարաւոր եղած պիտի չըլլային, եթէ Ազգ. Պատուիրակութիւնը ատենին կոչուած ըլլար իր համաձայնութիւնը տալու եւ մասնակցելու այդ ակտին կատարման, յանուն բովանդակ արեւմտահայութեան, եւ եթէ, միւս կողմը, նոյն ինքն այդ ակտին ապօրինութեան պատճառաւ, Հայաստանի ներկայ սահմաններուն մէջ ապրող ժողովուրդին մէկ մեծ մասն ալ, լինի իր արեւելահայ եւ արեւմտահայ երեք քաղաքական կազմակերպութիւններուն (ժողովրդական, Սոցիալ-Դէմոկրատ, Ռամկավար) պաշտօնապէս արտայայտուած բողոքով, կամ լինի անհատապէս, կատարուած գործողութիւններէն բոլորովին հեռու եւ խորհրդարանի ու Կառավարութեան ներկայ կազմին մէջ անմասն մնացած չըլլար: Ազգ. Պատուիրակութիւնը երբ, յանուն հայ ժողովրդի շահին եւ Հանրապետութեան Փարիզի Պատուիրակութեան խընդրանքով, յանձն կ'առնէր աշխատիլ գործուած սխալը դարմանելու եւ կը հրաւիրուէր իբր հաւասար կողմ իր առաջարկները ներկայացնելու, անտարակոյս չէր կրնար անտարբեր անցնիլ կատարուած գործերու տարամերժօրէն կուսակցական բնոյթին եւ արդիւնքին վրայէն եւ պարտաւոր էր գործին այդ կողմը եւս սըր-

Generated on 2017-07-13 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

բագրութեան ենթարկել: Բաց աստի, ծանօթ է այն իրողութիւնը, թէ Ազգ. Համագումարը, որմէ բղխած է ինքը Ազգային Պատուիրակութիւնը, արդէն մէկէ աւելի անգամներ առիթն ունեցած էր զբաղելու իր անդամներէն ոմանց այն առաջարկովը, որ կը ձգտէր նոյնիսկ անհեռատես կերպով, ինչպէս կատարուեցաւ Մայիս 28-ի ակտը, Համագումարին որոշել եւ ընդունել տալ այդ ակտին էութիւնը, այսինքն՝ Հանրապետութեան Կառավարութիւնը ընդունիլ տալ, առանց վերակազմութեան, երկու հատուածներու կառավարութիւն: Համագումարը ըստուար մեծամասնութեամբ մերժած էր հետեւիլ այդ ճամբուն, որուն մէջ մտնելու զինք հրաւիրողները կը պատկանէին այն միեւնոյն քաղաքական կուսակցութեան, որ վերջէն կատարեց այստեղ Մայիս 28-ի ակտը եւ ապօրինի կերպով կազմեց իբրեւ թէ Ամբողջական Հայաստանի Կառավարութիւնն ու խորհրդարանը՝ միմիայն իր մասնակցութեամբը: Արդ, եթէ աւելցընենք ասոր վրայ նաեւ սա պարագան, թէ Ազգ. Պատուիրակութիւնը, իբրեւ հարազատ ցոլացումը Ազգ. Համագումարին, կազմուած է վերը ակնարկուած կուսակցութեան մասնաւորապէս այս խնդրին մէջ ունեցած տեսակէտները եւ ուղղութիւնը մերժող եւ, ընդհանրապէս, անոր

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քաղաքական եւ ընկերային սկզբունքը չը բաժնող մեծամասնութենէ մը, եթէ յիշենք նոյնպէս, թէ այդ մեծամասնութիւնը կրնայ շատ դիւրաւ միատարրութիւն ըլլալ, եթէ Համագումարը չունենայ՝ հայկական խնդրոյն ներկայ փափուկ վիճակին մէջ՝ ազգին մէջ համերաշխութիւնը պահպանելու գերազանց մտահոգութիւնը — մտահոգութիւն, զոր երբէք չունեցաւ Մայիս 28-ի ակտը կատարող կուսակցութիւնը այստեղ — եթէ, կ'ըսենք, աւելցնելու լինինք միւս փաստերուն վրայ ամբողջ արեւմտահայութեան օրինական ներկայացուցչութիւնն եղող Ազգ. Պատուիրակութեան կազմին պարագան վերոյիշեալ կուսակցական տեսակէտէն, դիւրաւ կը հասկնանք, թէ ինչո՛ւ Ազգ. Պատուիրակութիւնը պարտաւորուած էր եւ հարկադրուած, Մայիս 28-ի ակտը դարմանել ձգտող իր առաջարկութիւններուն մէջ, խօսիլ գործին թէ՛ հատուածական եւ թէ՛ կուսակցական կողմին վրայ: Եթէ, միւս կողմէ ներկայացուած առաջարկները (մասնաւորապէս Կառավարութեան վերաբերեալ գլուխին 3րդ յօդուածը) բանակցող միւս կողմին վրայ, "այն տպաւորութիւնն են թողնում, որ մեզ հետ բանակցում են ոչ թէ արեւմտեան հայութեան *մէկ մասի* (ընդգծումը մերն է) ներկայացուցչութիւնը, այլ ա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ռանձնապէս Ռամկավար եւ Ժողովրդա-
կան կուսակցութիւնները”, այդ բանն ալ,
եթէ նոյնիսկ նիշդ ըլլար, պէտք չէր, որ
շատ զարմացնէր մեզ հետ բանակցողնե-
րը, քանի որ իրենց կողմէ ամէն բան
խիստ կուսակցական ուղղութեամբ եւ այ-
լամերժ տեսակէտով յառաջ տարուած լի-
նելով՝ Ազգային Պատուիրակութիւնը
կրնար ուզել զայն հակակշռել իր տեսա-
կէտները պաշտպանելու համար ամենէն
աւելի հաստատամտութեամբ հրապարակ
եկած կազմակերպեալ ուժերու միջոցով,
այսինքն ժամանակաւոր Կառավարու-
թեան մէջ կուսակցութեան մը դէմ կու-
սակցութիւններու մասնակցութիւնով:
Իրաւ է թէ՝ բացի յիշեալ յօդուած 3-էն
ուրիշ ոեւէ տեղ շեշտուած չէ, թէ համա-
ձայնութիւնը պիտի կատարուի այս կող-
մէն անպայման Ռամկավար ներկայացու-
ցիչներու հետ, եւ, ընդհակառակը, ըս-
ուած է, թէ Ազգ. Պատուիրակութիւնը
ինք պիտի նշանակէ “ոչ-դաշնակցական
արեւմտահայ անդամները”, եւ Ազգ.
Պատուիրակութեան ներկայացուցիչները
նոյնիսկ յօդ. 3ին վրայ տարածած են այս
բացատրութիւնը, ինչպէս այդ կը վկա-
յեն նիստերու արձանագրութիւնները —
բայց մենք կը նկատենք, որ Ազգ. Պատ-
ուիրակութիւնը կատարելապէս իրաւունք
ունի եւ եթէ ուզէ, ներկայ դէպքին մէջ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:43 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կուսակցութեան մը ներկայացուցիչներուն ընդդէմ կուսակցական ներկայացուցիչներով գոյացնելու համագործակցութիւնը: Միևնոյն պատճառաբանութեամբ, մենք կը գտնենք, որ անտեղի է ռեւէ առարկութիւն ընել մեր ներկայացուցիչներուն երկուքին կուսակցական հանգամանքին վրայ, քանի որ ներկայացուցիչներու անձնաւորութիւնը չէ, որ նկատի կ'առնուի երբեւիցէ, այլ ներկայացուած մարմինը, որ, այս պարագային, մեծամասնութեամբ կազմուած է անկախ անձնաւորութիւններէ: Իսկ թէ ինչո՛ւ առաքելութեան մէջ չեն գտնուիր Պատուիրակութեան կազմը բաղկացնող բոլոր հոսանքները, այդ մասին կարելի է մէկ բառով պատասխանել եւ ըսել, թէ Պատուիրակութիւնը կ'ուզէր գործ կատարել եւ ոչ թէ ցոյց, եւ իր մեծամասնութեան տեսակէտը ընդունած անձնաւորութիւնները պէտք է լինէին իր բանակցողները, եւ ոչ թէ ընդդիմական կողմին տեսակէտները ընդունողներ, ինչպէս այդ պիտի լինէր՝ հետեւցնելով անձամբ անոնց արդէն արտայայտած կարծիքներէն և անոնց պահելիք կուսակց. կարգապահութենէն: Այս եւս կ'ըսենք, որ "երկուութեան եւ Պատուիրակութեան ներկայացուցած կուսակցական հանգամանքին մասին եղած դիտողութիւնները իրենց հիմքէն խախտը-

ւած են այն իսկ վայրկեանէն, որ մեզ հետ բանակցողները կ՚ընդունին իրենց փոխ-առաջարկներուն մէջ, մեր կուսակցական առաջարկներ ընելու իրաւունքն եւս, եւ այս առաքկութիւնը կ՚ընեն սոսկ անոնց լրիւ գոհացում չտալու առթիւ, այն է՝ Կառավարութեան կազմին մէջ ոչ թէ հաւասարութիւն, այլ իրենց կողմին համար մեծամասնութիւն պահանջելու առթիւ:

Եւ թէ Ազգ. Պատուիրակութիւնը, որուն ներկայացուցիչներն ենք, "արեւմտահայութեան մէկ մասի" թէ ամբողջութեան "ներկայացուցչութիւն" է, այդ կէտը այնքան կարեւոր է մեզ համար, որ պէտք է ճշդուի ուրիշ ամէն բանէ առաջ: Եթէ տարակոյսի տակ կը դրուի Ազգային Պատուիրակութեան արեւմտահայութեան ներկայացուցչութիւնն ըլլալու հանգամանքը, ուրեմն, անկարելի կը լինի մեզ համար ոեւէ արդիւնաւոր գործ տեսնել, եւ անօգուտ է, որ խօսինք մեզի բերուած փոխ-առաջարկներուն մանրամասնութիւններուն վրայ, որ ընդունինք որոշ կէտեր եւ մերժենք ուրիշներ եւ կամ համաձայնութեան համար՝ երկու կողմի գաղափարները հաշտեցնել ձգտող նոր առաջարկներ բերենք: Միաժամանակ անհրաժեշտ է ոեւէ նոր թիւրիմացութեան տեղի չթողելու համար, որ յստակ կեր-

Generated on 2017-07-13 11:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

պով ըսուի, թէ մեզ հետ բանակցողները ո՞ր օրինական մարմնին ներկայացուցիչներն են: Պրն. վարչապետին բացարձակ հաւաստիացումին վրայ, թէ երբէք խընդրոյ նիւթ պիտի չըլլայ Ազգ. Պատուիրակութեան եւ իր բանագնացներուն իրաւասութիւնը, մենք եւս յանձն առած էինք չպնդել, որ ճշդուի մեզ հետ բանակցողներու ներկայացուցչական հանգամանքը, գոհանալով վարչապետին այն յայտարարութեամբը, թէ Կառավարութեան համար պարտադիր պիտի ըլլայ կնքուելիք համաձայնութիւնը, որ նոյնպէս, կը վըստահացնէր Պրն. վարչապետը, պիտի ընդունուի Խորհրդարանէն: Արդ, քանի որ այս համաձայնութիւնը չպահուեցաւ արդէն, հարկ է գրաւոր յայտարարութիւնով միանգամ ընդմիշտ մէջտեղէն վերցընել ամէն թիւրիմացութիւն:

Տրուած ըլլալով այս ամէնը՝ որպէսզի կարելի ըլլայ արդիւնաւոր կերպով շարունակել բանակցութիւնները, անհրաժեշտ է, որ մեզի բացորոշ կերպով յայտարարուի հետեւեալը.

Ա.— Ազգ. Պատուիրակութեան առաքելութեան հետ բանակցողները Հանրապետութեան Կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչներն են.

Բ.— Հանրապետութեան Կառավարութիւնը եւ իր ներկայացուցիչները կը

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:49 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ճանչնան Ազգ. Պատուիրակութիւնը իբր բովանդակ արեւմտահայութեան ներկայացուցչութիւն.

Գ.— Հանրապետութեան Կառավարութիւնը եւ իր ներկայացուցիչները ոեւէ առարկութիւն չունին Ազգ. Պատուիրակութեան դրկած առաքելութեան կազմին դէմ:

Ոչ ոք աւելի բուռն ցանկութիւն եւ ձգտում ունի, քան Ազգ. Պատուիրակութիւնը եւ իր ներկայացուցիչները՝ Ամբողջական Հայաստանը իրականացած տեսնելու: Մենք կը սիրենք յուսալ, թէ ունենալով նոյն ձգտումը՝ Կառավարութիւնն ու իր յարգելի բանագնացները պիտի ընդունին մեր յառաջ բերած դիտողութիւններուն արդարացիութիւնը եւ մեր կամքէն բոլորովին անկախ կերպով ստեղծուած ներկայ դժուարութիւնը բառնալով՝ այս բախտորոշ բոպէներուն պիտի ջանան հայ ազգին գերագոյն շահերն ապահովցընել:

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ
Ն. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ
Ս. ՑԱՐՈՒԹԻՆԵԱՆ

Երեւան, 6 Նոյ. 1919 թ.

Պարզ է, որ մարդիկ սխալ են հասկացել մեր դիտողութիւնները եւ նրանց մէջ տեսել են բանակցութիւնները վիժեցնե-

Generated on 2017-07-13 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

*լու դրդիչ։ Այդ առթիւ, Նոյեմբ. 7ին նը-
բանց գրում է հետեւեալ նամակը.*

Մեծայարգ Պրն. Վ. Թէֆէեան,

Ի պատասխան ձեր Նոյ. 6 գրութեան, պատիւ ունիմ հաղորդելու, որ ձեր գրութեան մէջ յարուցուած բոլոր հարցերի պատասխանն արդէն տրուած կայ բանակցութեանց նիստերի արձանագրութիւնների մէջ։ Առաջ եմ բերում այդ պատասխանները համաձայն ձեր դրած կէտերի։

Ա.— Ազգային Պատուիրակութեան առաքելութեան հետ բանակցողները ներկայացուած են Հայաստանի Նախարարապետ Ա. Խատիսեանի կողմից եւ լիազօրուած են պաշտօնապէս բանակցելու։

Բ.— Մեր նկատողութիւնն Ազգ. Պատ. "արեւմտահայութեան մէկ մասի" ներկայացուցիչ լինելու մասին արուած է այն մտքով, որ Հայաստանի սահմաններում ապրող արեւմտահայութիւնը մասնակցելով Պարլամենտի ընտրութիւններին՝ արդէն իսկ միացած է Հանրապետութեան, եւ հետեւաբար, Ազգ. Պատուիրակութիւնը ներկայացնում է Հայաստանից դուրս ապրող արեւմտահայերին։

Գ.— Մեր դիտողութիւններն Ազգային Պատուիրակութեան ուղարկած առաքելութեան կազմի մասին նպատակ չունին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

առաքելութեան մերժումը: Մենք կարծում ենք, որ բանակցութիւնների յաջողութեան համար իսկ աւելի օգտակար կը լինէր առաքելութեան մէջ տեսնել Ազգային Պատուիրակութիւնը կազմող բոլոր հոսանքներից ներկայացուցիչներ:

Այս բոլոր դիտողութիւնները, սակայն, ամենեւին արգելք չեն շարունակելու համար բանակցութիւնները: Մեր նպատակը չէ առաքելութեան որեւէ անդամի կամ ամբողջութեան դէմ որեւէ առարկութիւն հանել: Որքան եւ թերի լինէր կազմուած Ազգ. Համագումարն ու Պատուիրակութիւնը, տուեալ պայմաններում նրանք ճանաչուած են արեւմտահայերի ներկայացուցչութիւն, եւ մեր անկեղծ փափաքն է գտնել համաձայնութեան գետին երկու հատուածների միջեւ:

Ցուսալով, որ ներկայ բացատրութիւնները բաւական կը լինեն ցրելու համար ձեր տարակուսանքները՝ սպասում ենք ձեր պատասխանին մեր կողմից ներկայացուած հակառաջարկներին, որպէսզի կարելի լինի գումարել նիստ՝ ցանկալի վախճանին հասցնելու համար սկսուած բանակցութիւնները:

Ցարգանօք՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

Generated on 2017-07-13 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

Այս բացատրութիւնները միանգամայն սպառում էին հարցը: Անհրաժեշտ էր մեր որոշ կերպով ներկայացուած առաջարկներին տալ նոյնքան որոշ պատասխան: Այդ նպատակով գումարւում են էլի երկու պաշտօնական եւ մի քանի անպաշտօն նիստեր եւ, սակայն, համաձայնութեան դէտին հնարաւոր չի լինում գտնել՝ չնայած, որ մեր կողմից լինում են մի քանի շեղումներ եւս:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԶԿԱՅԱՅԱՒ

Այդ պաշտօնական եւ, մանաւանդ, անպաշտօն նիստերում, վերջ ի վերջոյ, մենք եկանք կանգնեցինք հետեւեալ պայմանների վրայ.

Ա.— Ներկայ Պարլամենտը պետական բիւդջէն քննելուց եւ վաւերացնելուց յետոյ 1—2 ամսով արձակուրդ կ՝ստանայ:

Բ.— Անմիջապէս կը ձեռնարկուի լրացուցիչ ընտրութիւնների. կ՝ընտրուեն 51 արեւմտահայ պատգամաւորներ եւս:

Գ.— Ընտրութիւնները կը կատարուեն Հայաստանի ընտրական օրէնքներով, տեղական պայմաններին յարմարեցնելով:

Դ.— Ընտրական գործի կազմակերպութիւնն ու ղեկավարութիւնը կ՝ստանձնէ Պօղոս Նուպարի Պատուիրակութիւնը:

Ե.— Միացեալ Կառավարութիւնը կը կազմուի անմիջապէս, բայց եթէ պահանջեն, կարելի է կազմել եւ բիւդջէի քննու-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թիւնը վերջացնելու ու Պարլամենտի դադար ստանալու ժամանակ։

Զ.— Կառավարութիւնը կը կազմուի 9 նախարարից — 5 Դաշնակցական, 4 ոչ-դաշնակցական։ Վարչապետը Դաշնակցական։ Համաձայն ենք, որ արտաքին գործոց նախարարը լինի Պօղոս Նուպարը։

Է.— Երաշխաւորում ենք, որ Միացեալ Կառավարութիւնը կը մնայ մինչեւ լրացուած Պարլամենտի գոյութիւն ունենալը։

Ը.— Համաձայն ենք, որ Միացեալ Պատուիրակութեան նախագահը լինի Պօղոս Նուպարը։ Համաձայն ենք, որ Միացեալ Պատուիրակութեան մէջ Դաշնակցականները լինեն փոքրամասնութիւն։

Թ.— Համաձայնութեան ակտը կը յայտարարենք այն մտքով, որ Տաճկահայաստանն ու Ռուսահայաստանը միացել են միմեանց։

Պօղոս Նուպարի առաքելութեան վերջնական պայմանները.

Ա.— Միացեալ Պատուիրակութիւն Պօղոս Նուպարի նախագահութեամբ։

Բ.— Միացեալ Կառավարութիւն 9 կամ 11 նախարարներից, որոնցից պատերազմական նախարարը չէզոք, իսկ մնացեալները՝ կէս առ կէս— 4արեւելահայ, 4 արեւմտահայ եւ 4 Դաշնակցական ու 4 ոչ-դաշնակցական։ Սակայն, «մենք կրնանք նաեւ ընդունիլ 10 անձէ կազմուած կառավարութիւն մը Դաշնակցական բացարձակ մեծամասնութեամբ» — 5 Դաշնակցական, 4 ոչ-դաշնակցական եւ պատերազմական նախարարը չէզոք, «պայմա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նաւ սակայն, որ այդ կառավարութիւնը ամէն բացառիկ կարեւորութիւն ունեցող որոշումները — արտաքին քաղաքականութեան եւ ընկերային բարենորոգումներու վերաբերեալ որոշումները, ինչպէս եւ Պատուիրակութեան տրուելիք հրահանգները — կայացնէ երկու-երրորդի մեծամասնութեամբ, կամ լաւ եւս՝ եօթ ձայնով տասնի վրայ»:

Գ.— Պօղոս Նուպարին տալ արտաքին գործոց նախարարի պօրտֆէյլ կամ Հանրապետութեան դերագոյն ներկայացուցչի դիրք:

Դ.— Ներկայ Խորհրդարանը պէտք է արձակուի մինչեւ արեւմտահայ պատգամաւորների ընտրութիւնը եւ նրանց երեք քառորդի Երեւան հասնելը: Կարելի է արձակուրդ տալ բիւդջէի քննութիւնից յետոյ, բայց կօալիցիօն կառավարութիւնն էլ գործի պիտի սկսէ Պարլամենտի արձակուրդից յետոյ:

Ե.— Արեւմտահայ պատգամաւորների ընտրութեան նախաձեռնութեան եւ ընտրական օրէնքի որոշման իրաւունքը պատկանում է Ազգ. Պատուիրակութեան եւ կամ կօալիցիօն կառավարութեան:

Զ.— Ներկայ Խորհրդարանը արձակուրդի ընթացքին կարող է վերստին նիստ գումարել բացառիկ խնդիրների առթիւ, պայմանաւ որ նշանակուած հարցից զատ ուրիշ որեւէ բանով չզբաղուի:

Է.— Համաձայնութիւնը կը յայտա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բարուի այն մտքով, որ Ռուսահայաստանն է միացել Տաճկահայաստանին։

Եթէ այս երկու կողմերի պայմանները ուշադրութեամբ համեմատելու լինենք, կը պարզուի, որ, վերջ ի վերջոյ, անհամաձայնութեան գլխաւոր առարկան Պարլամենտի արձակուրդի ժամանակն է. մենք ասում էինք, որ Պարլամենտին արձակուրդ կարելի է տալ միայն որոշ ժամանակամիջոցով, օրինակ մէկ կամ երկու ամիս ժամանակով, նրանք պնդում էին, թէ արձակուրդը պէտք է լինի անորոշ ժամանակով։ Մեր պնդելու գլխաւոր պատճառն այն էր, որ չի կարելի այսպիսի պատասխանատու ժամանակներ պետութիւնն առանց Պարլամենտի պահել, իսկ նրանք առարկում էին, որ կօալիցիոն կառավարութիւնն ու ներկայ Պարլամենտը չեն կարող միաժամանակ գոյութիւն ունենալ, որովհետեւ Պարլամենտը ունենալով կառավարութիւնից տարբեր կազմ, կարող է ուզած ժամանակը նրան տապալել։ Մենք երաշխաւորում էինք, որ մինչեւ նոր կազմով Պարլամենտի գումարումը կօալիցիոն կառավարութիւնը չի տապալուի, սակայն այդ գոհացում չէր տալիս նրանց։ Մեզ թւում է սակայն, որ մեր նկատումներն աւելի արդարացի են եւ հիմնաւոր, եւ յանուն համերաշխութեան նրանք պարտաւոր էին մէկ կողմ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:50 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թողնել ինչ որ զուտ ձեւական առարկութիւնները։

Կառավարութեան վերաբերմամբ էլ Պօղոս Նուպարի առաքելութիւնը դրել էր այնպիսի պայմաններ — երկու-երրորդի մեծամասնութեան հարց — որ փաստօրէն կառավարութիւնը վերածելու է անկամ, երերուն եւ անուժ մի մարմնի, մինչդեռ այժմ աւելի քան երբէք մեզ հարկաւոր է կամքի տէր եւ զօրաւոր կառավարութիւն՝ անշեղ ու վճռական գործելակերպով։

Բանակցութիւնների 9-րդ նիստում մի անգամ էլ մեր պայմաններն ու բացատրութիւնները լսելուց յետոյ, Պրն. Վ. Թէքէեան եզրափակեց.

«Եզրակացնելով մեր բոլոր ստացած պատասխանները դրուած առաջարկներին՝ ես պէտք է հաստատեմ, որ համաձայնութեան ո՛չ մի կէտ չկայ վերջին առաջարկներուն վրայ, եւ կը մնայ, որ մենք գրաւոր կերպով արձանագրենք այդ։ Ես այլեւս ոեւէ հնարաւորութիւն չեմ տեսնար միութիւն կայացնելու»։

Եւ յաջորդ՝ 9-րդ ու վերջին նիստին, Նոյեմբեր 16-ին, «գրաւոր կերպով արձանագրուեց» միութիւն չկայանալը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպէս, ուրեմն, մօտ քսան օր տեւող բանակցութիւնները վերջացան առանց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

դրական արդիւնք տալու։ Բանակցութիւնները վարող երկու կողմերն էլ, կարելի է ասել, հաւասար սրտցաւութեամբ եւ անկեղծութեամբ աշխատում էին համաձայնութեան գետին փնտռել, բայց եւ այնպէս կողմեր բաժանուեցին առանց հասնելու տրուած նպատակին։ Ի՞նչ է դրա պատճառը։

Այժմ, երբ ես նորից ու նորից մտածում եմ բանակցութիւնների ընթացքի եւ դրուած հարցերի քննութեան եղանակի մասին, զալիս եմ նորից նոյն համոզման, ինչ որ ունէի բանակցութիւնները սկսելուց առաջ։ Այսինքն՝ բանակցութիւնների յաջողութիւնն ու ձախողութիւնը կախուած էր ոչ թէ դրուած պայմանների աւելի կամ պակաս լինելուց, այլ այն հոգեբանական նախադրեալներից, որ կողմերն ունէին միմեանց հանդէպ։

Ի՞նչ էինք մենք Նուպարեանների համար եւ Նուպարեանները՝ մեզ։

Թէեւ բանակցութիւնները տարուում էին չափազանց կօրեկտ ու զուսպ ձեւով, բայց պակաս չէին ակնարկներ, որոնք ցոլացնում էին փոխադարձ տրամադրութիւնները իրար վերաբերմամբ։ Նուպարեանների համար մենք նախ եւ առաջ սոցիալիստներ էինք ու յեղափոխականներ, որոնք մեծ պետութիւնների աչքին վստահութիւն չունին։ Եւ որովհետեւ նրանց

Generated on 2017-07-13 11:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN

համոզումով Հայաստանի փրկութիւնը միայն մեծ պետութիւններից է կախուած, ապա, ուրեմն, սոցիալիստների մնալը պետութեան գլխին երբէք թոյլատրելի չէր։

Բացի այդ, մենք իբրեւ սոցիալիստներ, պէտք է ձգէինք որոշ ընկերային բարենորոգումներ իրականացնելու, այն ինչ իրենց ներկայացրած հոսանքը՝ հայ մեծատունների եւ դրամատէրերի շրջանները, որոնց համար Հայաստանը ամենից առաջ նաեւ հարուստ շահաստան է, չէր կարող հաշտուել այն մտքի հետ, որ Հայկական պետութեան ղեկը իրենց ձեռքին չգտնուի։

Այս երկու արտաքին եւ ներքին պատճառներից դրդուած Պօղոս Նուպարի առաքեալները կասկածով ու չկամութեամբ էին նայում մեզ։ Աւելացրէք դրա վրայ եւ մի չարք կուսակցական ճղճիմ հանգամանքներ, եւ ձեզ համար հասկանալի կը լինի հոդեբանական այն մթնոլորտը, որի մէջ յօրինուել են Պարիզից եկած չափազանցուած պահանջները։

Մեր տեսակէտը Հայաստանի ճակատագրի մասին մի քիչ այլ էր։ Կարեւորութիւն տալով հանդերձ արտաքին ուժերին՝ մենք կարծում ենք, որ հայ ժողովրդի բախտն ամենից առաջ իր ձեռքին է գտնուում, շատ բան կախուած է հայերի

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իրենց իսկ ցուցադրած կամքից ու կարողութիւնից։ Ցետոյ՝ Հայաստանի Հանրապետութիւնը մեզ ներկայանում է որպէս մի պետութիւն, որ ամենից առաջ հետապընդում է հայ ազգը կազմող հաւաքականութեան մեծագոյն մասի, աշխատաւոր ժողովրդի շահերի եւ իրաւունքների պաշտպանութիւնը։ Հետեւաբար, մեր հասկացողութեամբ Հայաստանում պէտք է տիրեն տէմօկրատիկ՝ ժողովրդական կարգեր։ քաղաքական ու տնտեսական խնդիրները պէտք է կարգաւորին այնպէս, որ ամենից շատ օգտուի հայ աշխատաւորութիւնը։ Այսպիսով, ուրեմն, կառավարութիւնն էլ պէտք է յենուած լինի ժողովրդի վստահութեան վրայ եւ նպատակ ունենայ առաւելապէս ռամկավար խաւերի պահանջները։

Այս տեսակէտից ելնելով՝ մեզ համար դժուար հասկանալի եւ օտարոտի էին այն պահանջները, որ դնում էին Պօղոս Նուպարի ներկայացուցիչները, որոնք թէեւ, հասկանալի պատճառներով, ընդհանուր արեւմտահայութեան անունից էին խօսում, բայց, վերջ ի վերջոյ, չպէտք է մոռանալ, որ որոշ, հարուստ դասերի, այն էլ դաղութների ներկայացուցիչներ էին։ Մեզ համար անընդունելի էր թւում այնպիսի մի դրութիւն, որ ազգի փոքրամասնութեան, մի քանի խմբակների կողմից

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:51 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պայմաններ են թելադրում եւ ինչ որ կէս առ կէսի խնդիրներ դնում, առանց ծածկելու իրենց ցանկութիւնը ժողովրդական ընտրութեամբ կազմուած Պարլամենտը լուծուած տեսնելու :

Ահա երկու կողմերի այս մտայնութիւնն էր, իմ կարծիքով, գլխաւոր պատճառը անյաջողութեան: Եթէ Պարիզի առաքեալները մի քիչ աւելի ուղիղ գնահատէին երկրի վիճակը եւ ընդունէին, որ իրենց եւ Հայաստանի Հանրապետութեան տեսակարար կշիռը միեւնոյնը չէ, եթէ նրանք մի քիչ աւելի համեստ ծրագիրներով Ներկայանային, հաւանաբար ուրիշ արդիւնք կ՝ստացուէր: Նրանք այդ հեռատեսութիւնը, դժբախտաբար, չունեցան, եւ հետեւանքը բոլորիս աչքի առջեւ է:

Պէտք է այստեղ յիշել եւ մի ուրիշ հանգամանք. կօալիցիոն կառավարութեան փորձ մենք արդէն ունէինք, եւ փորձի վրայ հիմնուած՝ եկել էինք այն համոզման, որ ամենավատ միատարր կառավարութիւն աւելի լաւ է, քան ամենաուժեղ անձերից կազմուած կօալիցիոն կառավարութիւնը: Եւ եթէ կրկին անդամ մենք համաձայնում էինք կօալիցիոն կառավարութիւն ստեղծել, դրա պատճառն այն էր, որ մենք կամենում էինք երկու հատուածների միութիւնն իրականացած տեսնել: Մեր նպատակն էր, քա-

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղաքական ներկայ փափուկ վայրկեանին, վերացնել մէջտեղից հատուածական պայքարները եւ գոյացնել Ամբողջական Հայաստանի ամբողջական Պարլամենտն ու Կառավարութիւնը, այն ձեւով, որ ոչ ոքի կողմից առարկութիւն չվերցնէ: Բայց միեւնոյն ժամանակ մենք չէինք կարող թոյլ տալ, որ յանուն կօալիցիայի ստեղծելի քառակուսի անիւներով մի սայլ, որ ընդունակ չլինի շարժուելու: Այս նկատումներով էր, որ մենք պնդում էինք կառավարութեան մէջ որոշ մեծամասնութիւն ունենալու պահանջի վրայ: Յանուն միութեան էր, որ մենք համաձայնում էինք կարեւոր զիջումներ անել:

Համաձայնութիւնը տեղի չունեցաւ, եւ հանգիստ սրտով կարող եմ ասել, ո՛չ մեր պատճառով: Մեր խորին համոզումն է, որ հեռու չէ այն ժամը, երբ կեանքն առաջ կը բերէ միութիւնը, իսկ մինչ այդ վերջացնենք մեր յօդուածաշարքը այն խօսքերով, որով ես փակեցի բանակցութիւնների վերջին նիստը.

«Յոյս ունենք, որ համաձայնութիւն չկայացնելը պատճառ չի լինի, որ բոլորս համերաշխ եւ միաբերան առաջ չտանենք այն գործը, որի միակ նպատակն է Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարի իրականացումը»:

(Վերջ)

Digitized by Google
Original from UNIVERSITY OF MICHIGAN
Generated on 2017-07-13 11:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2017-07-13 11:52 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

Generated on 2017-07-13 11:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN

UNIVERSITY OF MICHIGAN-DEARBORN
3 9076 00294 3905

Generated on 2017-07-13 11:58 GMT / http://hdl.handle.net/2027/mdp.39076002943905
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF MICHIGAN